

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Քրիստոնէութիւնը Հայաստանում սկսեց տարածուել Ա. դարի 30-ական թուականներից, երբ հայ ազգը, Արտաշէսեան հարստութեան անկումից ետք, պայքարում էր իր պետականութեան, անկախութեան ու տարածքային ամբողջականութեան վերականգնման համար։ Իր նպատակի իրականացման համար նա ազատազրական պայքար էր մղում Հռոմի դէմք դաշնակցած Պարսկաստանի Պարթեւ, Աղիաբենէի եւ Եղեսիայի թագաւորութիւնների հետ։ Այդ պայքարին աւարտուեց Հայաստանի գահին զրադաշտական քրիմապետ, Պարսկաստանի գահակալի եղբայր՝ Տրդատ Ա.ի իշխանութեան հաստատմամբ՝ Արշակունեաց Հարսութեան հիմնադրմամբ։ Հակառակ վիճակի թելադրած դժուարութիւնների հելլէնիստական մշակութային մժնուորտում ապրող Հայաստանը սերտ կապերի մէջ էր նաեւ Պոնտոսի, Կապաղովկիայի, այդ օրերի Փոքր Ասիայի երկրների ու ալանների հետ։ Ա. դարի սկզբներին Հայաստանում գահակալում էր Պոնտոսի թագուհու եւ Կապաղովկիայի թագաւորի որդին։ Խակ ինչպէս գիտենք այդ դարի կէսերին Պետրոս, Պոլոս, Մատաթիա, Թովմաս, Սիմոն, նշուած երկրներում ծաւալել են աւետարանչական լայն աշխատանք ու հիմնել եկեղեցիներ։ Պատահական չէ, որ Հայաստան աւետարանչութեան առաքելութեամբ եկան թովմաս, Թադէոս, Բարթուղիմէոս, Անդրէաս, Մատաթիա եւ Սիմոն Նախանձայոց առաքեալները եւ տարբեր ազգերի (Հրեայ, յոյն, հռոմէացի, պարսկի, աղուան, ալան, ասորի, հայ) պատկանող աւետարանիչներ¹։ Մինչեւ Գ. դարու վերջերը աստիճանապատկանող աւետարանիչները Հայաստանում տարածուելով արմատակալուելով ու հայու գիտակցութեան մէջ տիրակալ դիրք գրաւելով ժողովրդականացաւ ու օրինականացաւ 301-ին՝ Տրդատ Գ. թագաւորի գահա-

¹ TOURNEBIZE, *Histoire politique et religieuse de l'Arménie*, Paris, 1900 pp 401-413; Ruffin, Bernard C., The Twelve-The lives of the Apostles After Calvary, Our Sunday Visitor Publishing, Huntington, Indiana, 1997, pp. 185-186. ՄԱՂԱՔԻԱՆ ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, Պոլիս, 1912, հա. Ա., էջ 38-70):

կալութեան օրերին: Հայաստանում քրիստոնէութեան յաղթանակը միշտագային աւետարանչութեան նուածումն էր: Այն մի կողմից բխում էր հայկական կեանքի զարգացման ընթացքից, ներքին տրամաբառանութիւնից, հայկական հելլէնիզմից, եւ միւս կողմից իր կանխորոշող կնիքը դրեց ողջ հայ քաղաքական պատմութեան, հայ մշակոյթի, հայ իմացական, հոգեւոր ու ազգային կերտուածքի առանձնայատկութիւնների ձեւաւորման հոլովոյթի վրայ: Այս իրողութիւնը գիտակցում էին Վարդանանց շարժման նուիրեալները Ե. դարի կէսերին, երբ հաստատում էին, որ որպէս ազգ իրենք ծնունդն են Սուրբ Աւետարանի ու Հայ Առաքելական եկեղեցու. «Մեր մայրն ենք նանաչում Սուրբ Աւետարանը, եւ մայր՝ Առաքելական կաթողիկէ Եկեղեցին. թող ոչ ոք իբրև չար անջրպես մեջ ընկնելով մեզ պանից չրաժանի»²:

Այդ դարերում Հայաստանում նկատելի էր բազմակրօնութիւնը: Այնտեղ գործօն էր հին հայկական աւանդական պանթէոնը: Պատմական բերումով եւ մշակութային յարաբերութիւնների հետեւանքով վերջինս ստացել էր նաեւ իր պարսկականացած եւ յունականացած տարբերակները: Հայաստանում զգալի էին զրադաշտական ու յունա-հռոմէական պանթէոնների պաշտամունքը: Դեռ Զ. դարից (Ք.Ա.) Հայաստանում գործում էին նաեւ հրէական սինակոնները: Ա. դարից սկսել էր ներթափանցել ինչպէս իրաւ, այնպէս էլ աղանդաւորական քրիստոնէութիւնը: Հայ ժողովուրդը, այսպիսով, հնարաւորութիւն ունէր ընտրելու դրանցից որեւէ մէկը: Նա նախապատուութիւնը տուեց քրիստոնէութեան: Ինչո՞ւ: Միթէ՝ այդ քայլը զուտ պատահական էր: Այդ դէպքում ինչպէ՞ս բացատրել քրիստոնէական համայնքների գործունէութիւնը Ա-Գ. դարերի Հայաստանում:

Հինգերորդ դարի նորաստեղծ Հայատառ մատեանների ուսումնասիրութիւնը մեզ օգնում է, որ կարողանանք պատասխանել այն հարցին, թէ ինչպիսի՞ աստուածաբանական փաստարկներ են հայ մատենագիրները մատնանշում Հայաստանում քրիստոնէութեան յաղթանակը բացատրելու համար:

Ազաթանգեղոսի գրքի կարեւորութիւնը, ինչպէս նշեցինք, բըխում է նաեւ այն իրողութիւնից, որ նրա գրած պատմութիւնը իր մէջ պարունակում է մինչեւ Ե. դարու կէսերը Հայաստանում տարածում գտած քրիստոնէական դրոյթները, վերադասաւորուած խըմ-

² Եղիշէ, Վարդանի եւ Հայոց Պատերազմի Մասին, Թարգմ. եւ Շանօթ. Ե. Տէր Մինասեանի, Երեւանի Համալսարանի Հրատարակութիւն, Երեւան, 1989, էջ 135:

բագիրների կողմից։ Այն իր մէջ ներառնում է հեթանոսութիւնից դէպի քրիստոնէութիւն անցման փուլում Հայաստանում գոյութիւն ունեցող կրօնական մտայնութիւնն ու մտածողութիւնը՝ դիտուած նոր յաղթանակած քրիստոնէութեան դիրքերից։ Հստ էութեան շատ բան չի փոխուի, եթէ ընդունենք, որ Ազաթանգեղոսի գրքի Բ. բաժինը (Գրիգոր Լուսաւորչի Վարդապետութիւնը) պատկանում է Մեսրոպ Մաշտոցին։ Հաւանական է, որ գրերի գիւտից յետոյ Մաշտոց շարադրած լինի Գրիգոր Լուսաւորչի վարդապետութիւնը այնպէս, ինչպէս այդ ընկալում էր մինչեւ Ե. դարի 30-40-ական թուականները։ Վերջինս Ազաթանգեղոս օգտագործել է իր «Պատմութիւն» երկում։ Եզնիկ Կողբացու «Եղծ Արանդոց» աշխատասիրութիւնը, մեր ուսումնասիրութեան առումով խիստ արժէքաւոր է, քանի որ այն արտացոլում է Հայերի հակահեթանոսական կեցուածքի տեսական՝ աստուածաբանական-իմաստասիրական, էութիւնը։ Այն գրուել է գրերի գիւտից անմիջապէս յետոյ եւ Աստուածաշունչի թարգմանութեան ընթացքում (Ե. դարի 30-ական թուականներին)։ Այնտեղ սկզբունքային քննադատութեան է ենթարկում ինչպէս հին յունական, այնպէս էլ պարսկական (զրադաշտական) հեթանոսական կրօնները ու բացայացուում իր գիրքերը ամրապնդել սկսած քրիստոնէութեան առաւելութիւններն ու նրա յաղթանակի պատճառները։ Եղիշէն արդէն հարցին մօտենում է հեթանոսութեան դէմ ճակատագրական եւ համաքրիստոնէական նշանակութիւն ունեցող պակար մղող հայ եկեղեցու դիրքերից՝ Վարդանանց շարժման դիրքերից։

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ Է

Հայաստանում քրիստոնէութեան ներթափանցումը, տարածումն ու յաղթանակը առաջին հերթին արդիւնք էր աստուածային ծրագրի իրականացման, աստուածային նախախնամութեան։ Յիսուս Քրիստոս իր աշակերտներին պատգամեց. «Ինձ է տրուած ամենայն իշխանութիւն երկնելում եւ երկրի վրայ. ինչպէս Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում։ Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, մկրտեցէ՛ք նրանց Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով»³։ Մեր Տէրը շեշտեց. «Եւ արքայութեան այս Աւետարանը պիտի քարոզուի ամբողջ տիեզերքում՝ ի վկայութիւն բոլոր հեթանոսների. եւ ապա պիտի գայ վախճանը»⁴. Այս հիմքից ելնելով Ա-Ե. դա-

ըերի հայ աւետարանիչներն ու հաւատացեալները հաւատացած էին, որ քրիստոնէութիւնը լոկ հիմնուած չէ մարդու բանականութեան ու հարուստ կարողականութեան վրայ: «Ոչ թէ մարդու է ապաստանած, որ վերակացուի միջոցով տարածուի աշխարհում, այլ իր հաստատութիւնն իր մեջ ունի: Ոչ թէ ուրիշ վաստարեների մօտ է վեհ երեւում, այլ վերեւից՝ երկեցից ունի իր անսուս օրէնսդրութիւնը՝ ո՛չ միջնորդի ձեռքով, որովհետեւ մեկ է Աստուած եւ բացի նրանից ուրիշը չկայ, ո՛չ աւելի մեծ, ո՛չ աւելի փոքր»⁵:

Հայաստանում քրիստոնէութեան յաղթանակը, իր աւետարան-չական գործունէութեան խորքը Գրիգոր Լուսաւորիչ տեսնում է Աստուածային ծրագրի մէջ: Նա համոզուած է, որ Աստուած իրեն բոլոր փորձանքներից ազատել է, որպէսզի դառնայ Հայաստանում իր խօսքի տարածողը, քրիստոնէութեան յաղթանակի զինուորը: Աստուած նրան փրկել է Խոսրով արքայի հալածանքներից, հնարաւոր դարձրել նրա քրիստոնէական դաստիարակութիւնը, միացրել Տըրդատի բանակին, օդնել, որ բանակում հեղինակութիւն նուածի: Աստուած նրան կենդանի է պահել Տըրդատի դաժան տանջանքներից: Աստուած երկար տարիներ նրան կենդանի է պահել Խոր Վիրապի բանտում: Այդ բոլորը Աստուած կատարեց, որպէսզի Գրիգոր լուսաւորիչ մշակի Հայաստանի բնակիչների հոգիների ու մարմինների բժշկութիւնը: Խոսքը հայ ժողովրդին հասցէադրելով նա պնդում է. «Զեր հոգիների ու մարմինների բժիշկ դարձայ ձեզ մատուցելու այն, ինչ որ օգտակար է»: Մի քիչ անց նա աւելացնում է. «Թէ պէտեւ մենք անարժան էինք, սակայն ձեր օգտի համար մեզ Աստուած պահեց եւ ցոյց տուեց իր հրաշքների զօրութիւնը: Քանզի մեզ պահեց, որպէսզի ձեր մշակութային գործին մօտենալով եւ ձեզ օգուտ բերելով՝ Աստծոյ մարդասիրութիւնը մեր միջոցով ձեր նկատմամբ կատարուի»⁶: Հռիփսիմեանց կոյսերի նահաստակութիւնն է իր դրական անդրադարձն ունեցաւ Հայաստանում քրիստոնէութեան օրինականացման գործում. «Նրանց թափած արդար արեան համար ձեր ապաշխարութեամբ ահա բաւութիւն շնորհեց ամեն ինչ պարզեւող Աստուած»⁷: Ղազար Փարագեցի «Քրիստոսի առաւելագոյն

⁴ Մտ. 24:14:

⁵ Եղիշե, Նշ. աշխ., էջ 59:

⁶ ԱԳԱԹԱՆԴԵՂՈՍ, Պատմութիւն Հայոց, թարգմանութիւն Արամ Տէր Ղեւնդեանի, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, § 239, 248, 257, էջ 133, 137, 143:

օգնութիւնն է» տեսնում Հայաստանի վաղ շրջանի քրիստոնեաների գործունէութեան մէջ, որը նոյնիսկ հիացրել է «մոլորեալ մարդկանց»: Նրանք իրենց գործունէութեամբ «Հայաստան աշխարհն անգիտութեան խաւարից դէպի աստուածային արքայութեան լոյսը» առաջնորդեցին⁸:

Մենք ցանկանում ենք ձեր ուշադրութեան յանձնել այս առթիւ «Վարդապետութիւն Սուրբ Գրիգորի» բաժնում արտայացուած երկու ուշագրաւ գաղափարների վրայ: Առաջինը ազերս ունի վաղ քրիստոնէութեան դարաշրջանում հակաքրիստոնեաների գործադրած հալածանքներին, մանաւանդ Գայլիանէի, Հռիփսիմէի եւ նրանց խմբի անդամներին տանջամահ անելուն: «Եթէ ձեր միտքը մտնի, թէ մենի սպանեցինք առլր վկաներին, ապա իմացէք, որ նոյն ձեւով Պողոս իր հրեւութեան ժամանակ չիմացուեց, որ լինելու է ընտրութեան անօրը: Նա եկաւ առաքեալ ների քարոզութեան ժամանակ եւ նրանց հալածելով, սպանեց Ստեփանոսին եւ ապա դարձաւ աստուածութեան խոնարհութեան, ինչպէս նաեւ նրա քարքութեան վկան»⁹: «Արդ դուք այս զոհերին սպանողներն եք: Հաւատացէք սրանց հաւատին եւ ճգեցէք նրանց լուծը, ձեր հոգիներից դէն զցէք մեղքերի լուծը, եղէք նշմարտութեան քարոզի վկաներ, խմնցէք հոգենոր ըմպելիքի նոյն քաժակը եւ եղէք նրանց կցորդները»¹⁰: Եթէ Հայերը ընդունեն նահատակների քարոզած խաչեալ ու յարութիւն առած Քրիստոս Յիսուսին, ապա նրանք ոչ միայն կը փրկուեն, յաւիտենական կեանքի ու Աստուծոյ թագաւորութեան կ'արժանանան, այլեւ նրանց վրայից կը վերանայ մարդասպանութեան յանցագործութիւնը:

Մարգարէներից սկսում է մատուակութիւնը: Նրանք սկսեցին խմացնել մեղքերի հատուցման բաժակը եւ անխուսափելի մահուան դառնութիւնը: Այժմ Քրիստոսով Աստուած քաղցր ըմպելին եւ ուրախութեան անոյշ գինին պատրաստել է ամէնքի համար, որոնք կամենում են այն ըմպել հաւատով: Պատրաստել է նաեւ չար խաւակամենում են այն ըմպել հաւատով:

7 Նոյն, § 249, էջ 137:

8 ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՏԱՆ, Հայոց Պատմութիւն, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Բագրատ Ուրբարեանի, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակութիւն, Երեւան, 1982, էջ 7-9:

9 ԱԳԱԹԱՆԴԵՂՈՍ, նշ. աշխ., § 542, էջ 301:

10 Նոյն, § 544, էջ 303:

ըի դառնութեան մրուրը՝ չարերի ըմպելին, որն այրում է մինչեւ կործանում։ Հայ ժողովուրդը կանգնած է երկընտրանքի առաջ։ նա կամ պիտի խմի «անոյշ գինին» կամ «դառնութեան մրուրը»։ Այլ ընսրութիւն չկայ։ Գրիգոր Լուսաւորիչ խորհուրդ է տալիս խմել առաջին բաժակից՝ խմել իմաստութիւնը, ողորմութիւնը, քաջորութիւնը, հաւատը եւ ոչ թէ երկրորդը՝ անմտութիւնը, բարկութիւնը, անհաւատութիւնը, երկմտութիւնը, չարութեան այրիչ հուրը։ Առաջին բաժակի հուրը լուսաւորելու է հայութեան եւ ըմպելու ընթացքում այրելով տանելու է նրա տգիտութեան, հեթանոսական մեղքերի ժամագը եւ փրկելու հաւատի յոյսով։ Առաքեալները խմեցին առաջին բաժակից։ Հայ մարտիրոսները հայ ժողովրդին բերել հասցրել են առաքեալների նոյն բաժակը։ «Այս արդարները ցանկացան իրենց մահուամբ վկաներ լինել Տիրոց մահուան, որը իր մահուամբ կենդանացրեց արարածների մեռելութիւնը։ Քանզի մեր մահը ցանկալի դարաւ մեր Աստուծոյ մահուամբ, որ մեզ համար խմեց մահուան բաժակը եւ մեզ խմելու տուեց անմահութեան բաժակը։ Վասնզի այս մահը ժամանակաւոր է, որ միւս անգամ նորոգուենք, անփոփոխ, մշտնջենական կեանքի, յարութեան փառքի մեջ»¹¹։ Պաշտպանելով այս գաղափարը Շահն Շահին զրադաշտականութիւնը ընդունելու վերջնագրին գրած իրենց պատասխան նամակում Վարդանանց շարժման ղեկավարները աւելացնում են, որ եթէ անմահն Քրիստոս Յիսուս մարդու համար մահացաւ խաչի վրայ, որպէսզի մարդը փրկուի, ապա իրենք, որ մահկանացուներ են, մեծ պատրաստակամութեամբ կը մահանան Քրիստոսի համար, մի մահ, որը փաստօրէն տանում է անմահութեան»¹²։ Այս հիմքի վրայ ակնյայտ է դառնում քրիստոնէական մի այլ բացառիկ առանձնայատկութիւն. քրիստոնեան չի վախենում մահից, որովհետեւ Քրիստոս Յիսուս յաղթել է մահուն։ Մահը պարտուել է։ Խակ Ղեւոնդ Երէց ընդգծում է. «Եթէ մահը մեռնում է մահով, չվախենենք Քրիստոսին մահակից լինել, որպիսեւ ում եետ որ մեռնենք մենք, Երա հետ էլ կը կենդանանանք»¹³ Վարդան Մամիկոնեան, մեծ զօրապետը, ելնելով այս բոլորից, եղակացնում է, որ Քրիստոնէութիւնը քաջերի կրօնն է կամ քրիստոնէութիւնը քաջացնում է մարդուն. «Վախը թերահաւատութեան Յշան է. թերա-

¹¹ Նոյն, § 516, էջ 285.

¹² Եղիշէ, Նշ. աշխ., էջ 83.

¹³ Նոյն, էջ 217.

հաւատութիւնը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ քոյլ վախն էլ փախչի մեր մտֆերից ու խորհուրդներից»^{14:}

ԺԱՄԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՆԸ

Եզնիկ Կողբացին հարցնում է, թէ ինչո՞ւ Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ այդ տարիներին եւ ոչ աւելի շուտ։ Նա գրում է. «Բայց ինչո՞ւ, ասում են, ուշացաւ Քրիստոսի գալուստը, եւ այնքան ազգեր կորան՝ առանց աստուածապաշտութեան»։ Նախ նա Շեշտում է, որ Աստուած բոլոր դարերում աստուածապաշտութեան քարոզիչներ է ուղարկել, որոնց, սակայն, մարդիկ չեն հաւատացել։ Ապա շարունակում է. «Քրիստոսը չեկաւ աշխարհի մանկութեան շըրջանում, որովհետեւ մանուկներին պէտք էր կաթ, ոչ թէ ամուր կերակուր. եւ ոչ էլ եկաւ երիտասարդութեան եռանդուն շրջանում, երբ եկել-թափում էր դիւապաշտութեան մոլորութիւնը։ Այլ նախ վարժեցրեց բարոզիչների ու մարգարեների միջոցով՝ իրքեւ սնուցում կաթով, եւ ապա եկաւ տալու կատարեալ վարդապետութիւնը՝ որպէս ամուր կերակուր։ Քանի որ երեխային ոչ ո՛վ ամուր կերակուր չի տալիս, մեծամեծ գաղտնիքներ չի յայտնում, ոչ էլ ծանրակշիռ խօսքներ է ասում, մինչեւ որ կատարեալ չափահասութեան գայ»։ «Աստուած իր Որդու գալուստը յարմարեցրեց այն ժամանակամիջոցին, երբ գիտեր, որ օգտակար է լինելու»^{15:} Այսպիսով, Եզնիկ պատմութեան հոլովոյթի դրդապատճառների մէջ նկատում է տուեալ երեւոյթի մարդկային պահանջմունքները բաւարարելու կարողականութիւնը, դրա մարդկութեան իմացական մակարդակի եւ մարդու զարգացուածութեան հետ ունեցած համապատասխանութիւնը, եւ առաջացող երեւոյթի պիտանիութեան, ժողովրդականացման հնարաւորութիւնները։ Այս մօտեցումը կիրառելի է նաեւ Հայաստանում քրիստոնէութեան մուտքը, տարածումը եւ յաղթանակը հասկանալու եւ բացատրելու համար։

Վերոյիշեալ տրամաբանութեամբ մօտենալով մարդկային պատմութեան Եզնիկ Կողբացի թուարկում է կրօնների յաջորդականութիւնը. Հետեւելով հրէական աւանդութեան նա հեթանոսութեան պատ-

¹⁴ Նոյն, էջ 211.

¹⁵ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Եղծ Աղանդոց, Թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Ա. Աբրահամեանի, Երեւան 1994, Երեւանի Համալսարանի հրատարակութիւն, Գ. գիրք, Ժ.2., էջ 189-191:

մութիւնը սկսում է Սեղուքից (Տերոց), որը Ռագաւի որդին էր եւ Նաքորը հայրը, որը Աբրահամի մեծ հայրն էր¹⁶: Չուկաս նրա անունը յիշատակում է Քրիստոս Յիսուսի ծննդաբանութեան մէջ¹⁷: Նրա կարծիքով նախնիների պաշտամունքը, հերոսապաշտութիւնը հիմք է հանդիսացել հեթանոսութեան, թէեւ չի ժխտում ընութեան պաշտամունքի դերը: Եզնիկ բաժանում է այն տեսակէտը, որ առաջին կրօնները կոչուել են խոռագան, սկիւթական եւ հեթանոսական: Հրէութիւնը, Յուղայական կրօնը, գալիս ու վերցնում է դրանց: Դրան յաջորդում է քրիստոնէութիւնը¹⁸:

Նոյն հարցը բարձրացնում է նաեւ «Գրիգորի Վարդապետութեան» հեղինակը (Մեսրոպ Մաշտոց): Նա գտնում է, Աստուածարդ ու մարդ-Աստուած յարաբերութիւնը, ըստ աստուածային ծրագրի, այնպէս է իր բնոյթով, որ Արարիչը անընդհատ հաղորդակցութեան մէջ գտնուի մարդու հետ, որ Աստուած միշտ տարբեր ձեւերով յայտնուի մարդուն, խօսի նրա հետ, պատգամի նրան: Քանի Աստծուն բնորոշ է բնական անտեսանելիութիւնը, այսինքն ոչ ով կարող է տեսնել Աստծուն, եւ քանի մարդ զգայականի միջոցով ու օգնութեամբ կարող է ըմբռնել, հասկանալ ու ճանաչել գաղափարները, աստուածայինը, Աստուած մարդուն ներկայանում է մարմնականացուած ձեւով: Քրիստոս Յիսուս մարմնականացուած, մարդացած Աստուածն է: Նա աշխարհ եկաւ աստուածային ճշմարտութիւնները մարդուն փոխանցելու, նրան մեղքից ազատելու ու յաւիտենական կեանքի արժանացնելու համար, մարդուն նորից դէպի Աստուած վերաբարձնելու համար: «Իսկ ինչո՞ւ արդեօֆ Միաձինը երկարաձգում էր արարածներին նեղութիւններ հասցնելը, եթէ ոչ այն բանի համար, որ նախապիս զգուշացնի եւ իրեն ընտեղացնի, որպէսզի երբ յանկարծակի երեւայ, անծանօթ, անընդունելի չինի, այլ իրեւ Նրան տեսածներ ու սպասաւորներ, որպէս ծանօթ ընդունեն: Քանզի արդեն այդքան ժամանակ է, որ իր արարածներին գալով երեւաց ու անընդունելի եղաւ, ապա որչափ եւս անընդունելի պիտի լիներ, եթէ յայտնուէր այնպիսիների, որոնք չէին ազդարարուած եւ տեղեկացուած: Այլ կանխար յայտնեց խորհուրդը ամէն ազգերին եւ յաւիտեան եկողներին»¹⁹: Դժուար չէ տեսնել

¹⁶ Ծն. 11:20, Ա. Մնց. 1:20:

¹⁷ Հկ. 3:35:

¹⁸ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Աշ. աշխ., Էջ 169:

Եզնիկի եւ Ագաթանգեղոսի (Գրիգոր Լուսաւորչի-Մեսրոպ Մաշտոցի) գաղափարների ընդհանրութիւնը:

Աղամի եւ Եւայի անկումից յետոյ, մեղքի առաջացումից յետոյ, Աստուած անմիջապէս չգործադրեց մահուան պատիժը: Նա մարդու հետ չխզեց իր կապն ու հաղորդակցութիւնը: Նոր վիճակում ու պայմաններում եւ նոր առաքելութեամբ ու բովանդակութեամբ հանդէս եկող այդ կապն ու հաղորդակցութիւնը իրականացւում էր մեղաւոր մարդու հետ: Մեղքը խանգարում էր, որ այն բնականոն ընթանայ, որ մարդ կարողանայ ըստ էութեան եւ ճիշտ կերպով լսել Տիրոջ: Մարդը մեղքի պատճառով օտարացած էր: Խիստ թուլացած էր մարդու ծանօթութիւնը Աստծոյ հետ: Անհրաժեշտ էր որոշակի ժամանակ ու փորձառութիւն, որ մարդ վարժուի, յարմարուի ու ծանօթանայ նոր վիճակին եւ նոր բովանդակութեամբ իրականացուող հաղորդակցութեան: Այսպիսով, Ագաթանգեղոս ժամանակի գործօնը դիտում է ընկերային, իմացական ու հոգեբանական առումով:
Ամփոփելով Գրիգոր Լուսաւորչի-Մեսրոպ Մաշտոցի Հայեացքները Քրիստոսի մարդեղացման մասին Ծովագրթ Թոմսոն գրում է. «Մարդեղացումը Աստծոյ յանկարծակի գաղափարը չէր: Այն նրա փրկութեան տիեզերական ծրագրի մի մասն էր: Մարդեղացման խորհուրդը պահուած էր ժամանակի մէջ եւ յայտնուած արդարների ու մարգարեների գուշակութիւնների մէջ ըստ վերջիններիս այն ըմբռնելու կարողութեան: Այսպիսով Որդին առաջին մելքից յետոյ անմիջապէս չեկաւ երկիր, որպէսզի մարդիկ նախազգուշացուած չլինելով ընթունեն նրան»²⁰:

Ագաթանգեղոս (Գրիգոր Լուսաւորչի-Մեսրոպ Մաշտոց) գուգահեռ է տեսնում արարչագործութեան ընթացքի եւ մարդու պատմութեան միջեւ: Աստուած կարող էր մի ակնթարժում ստեղծել ողջ բնութիւնը: Սակայն Նա նախընարեց աստիճանական արարչութիւնը վեց օրերի ընթացքում եւ եօթերորդ օրը հանգստացաւ ու մարդկանց պատուիրեց, որ նրանք էլ վեց օր աշխատեն եւ եօթերորդ օրը հանգստանան, քանի որ այն Աստծոյ օրն է: Նոյն արամաբանութեամբ նա գտնում է, որ Աստուած հէնց առաջին օրից եւ մի անգամից կարող էր գործադրել աստուածային փրկութեան ծրագիրը եւ դարեր չսպասել Յիսուսին առաքելու համար: Բայց Աստուած

¹⁹ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Նշ. աշխ., § 352, էջ 197:

²⁰ The Teaching of Saint Gregory, Harvard University Press, Cambridge, MA, 1970, Translation and Commentary by Robert W. Thomson, Introduction, p. 6).

նախընտրում է աստիճանականութեան, կարգ ու կանոնի պահպանումը: Ի միջի այլոց նշենք, որ *Մովսէս Խորենացին* հաստատում է, որ «կարգեր պահպանելով» սկզբունքը կիրառել է Աստուած ինչպէս արարչութեան ժամանակ, այնպէս էլ պատմութեան մէջ²¹:

Ելակէտ ունենալով վերոյիշեալ սկզբունքն ու պատկերը Ագաթանգեղոս (Գրիգոր Լուսաւորիչ-Մեսրոպ Մաշտոց) մարդկային պատմութիւնը բաժանում է հիմնուելով արարչութեան եօթնօրեայ տեւողութեան ծրագրից: Արարչութեան ամէն մի օրը պատմութեան մէջ ներկայանում է որպէս մի հազարամեակ: Այնպէս ինչպէս իւրաքանչիւր օր Աստուած իրականացնում է որոշակի ասպարէզի արարչութիւն, այնպէս էլ ամէն մի դարաշրջանին բնորոշ է Աստուծոյ դրասեորման առանձնայատկութիւն: Քանի եօթերորդ օրը Տիրոջ օրն է եւ Տէրը այդ օրը հանգստացաւ ու մեզ պատգամեց նոյնպէս հանգստանալ ու այդ օրը յատուկ նուիրել իրեն պաշտելու եւ փառաբանել այդպէս էլ եօթերորդ հազարամեակը Տիրոջ հազարամեակն է, Աստուծոյ յաւիտենական իշխանութիւնը, Աստուծոյ թագաւորութեան մէջ բոլոր Աստուծոյ որդիների համատեղ կեանքի ժամանակաշրջանը²²:

Առաջին դարաշրջանը սկիզբն էր: Զարիքի ու դժուարութիւնների դարաշրջանում, Ա-Ե. դարաշրջաններում, կարող են նաեւ որոշ մարդիկ ընտրել լաւը, բարին, արդարը, վարձատրութեան արժանին ու աստուածայինը: Վեցերորդ՝ նորոգման փուլում, Աստուած իր յայտնութիւնը, մարդու հետ յարաբերութիւնը, հաղորդակցութիւնը իրադորեց իր աշխարհ գալով, մարդեղացմամբ, հրաշքներով, քարոզչութեամբ, խաչի վրայ թափած իր արիւնով մարդուն վրկելով մեղքից, յարութեամբ մարդու անմահութիւնը նորից հաստատելով եւ համբարձմամբ: Նա մարդկութեան պարզեւեց նաեւ Սուրբ Հոգու էջակ եւ Քրիստոսի եկեղեցին: Վեցերորդ հազարամեակը լինելու է նաեւ պատմութեան (ժամանակների) վախճանը, երբ տեղի է ունենալու Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ Քրիստոս իր հետ է բերելու եօթերորդ դարաշրջանի խորհուրդը: Աստուծոյ Հոգին վեցերորդ դարաշրջանում երեւաց կատարելու համար այն, ինչ նախորդում մարդարէացուել ու խոստացուել էր²³: Այսպիսով, Քրիստոս Յիսուսի յայտնութիւնը, ըստ Ագաթանգեղոսի, ունի նաեւ իր ներքին տրամա-

²¹ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՄԱՆԻ, Հայոց Պատմութիւն, Թարգմ. Ս. Մալխասեանի, Երեւան, 1940, էջ 56, 133:

²² ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Նշ. աշխ., § 366, 669, 670, էջ 205, 375:

բանութիւնը, որու մէջ իր տեղն ունի նաեւ ժամանակի գործօնը։ Աստուծոյ յայտնութիւնը մարդու կերպարանքով նա բացատրում է մարդկային իմացութեան ու ճանաչողական կարողականութեան առանձնայատկութիւններով, մանաւանդ մարդու իմացութեան տկարութեամբ։

Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» գրքում Գրիգոր Լուսաւորչին վերագրուած աղօթքում արտայայտում է այն գաղափարը, որ հին ժամանակներում Աստուած թոյլ է տուել, որ մարդիկ գնան ըստ իրենց կամքի եւ շեղուեն հունից։ Իր այդ տեսակէտը նա բխեցնում է Սաղմոսից։ «Իմ ժողովուրդը չունկնդրեց ձայնիս, եւ իսրայէլն ինձ չնայեց։ Բարձիթողի մատնեցի օրան, գնան իրենց սրտի թելադրանքով, քանզի շարժուեցին իրենց կամքով»²⁴։ Իսկ նոր ժամանակներում արդէն Աստուած «կանչում է ձեզ Իր փառքին ու անեղծութեանը, որպէսզի ժառանգորդ դառնանք յաւերժ կենդանութեան, որ չի անցնելու»²⁵։

Ագաթանգեղոսի «Հայոց Պատմութեան» մէջ մարդկային գոյութեան ընթացքը դիտում է նաեւ միալեզուութիւնից ու միացեղութիւնից դէպի բազմալեզուութիւն եւ բազմացեղութիւն անցնելու եւ նորից միալեզուութիւն ու միազգութիւն վերադառնալու իմաստով։ Առաջինը տեղի է ունենում Բաբելոնի աշտարակաշինութեան ժամանակ, իսկ երկրորդը իրականանում է Քրիստոս Յիսուսի խաչելութեամբ։ Աշտարակով մարդկութիւնը բաժանում ու թշնամանում է, իսկ Քրիստոսի խաչով փրկուելով միանում է նորից բայց այս անգամ Աստծոյ թագաւորութեան մէջ²⁶։

Հեղինակը համոզուած է, որ եթէ Բաբելոնի աշտարակը բաժանեց ազգերին ու քայքայեց նրանց միասնութիւնը, ապա Յիսուս Քրիստոսի խաչը պիտի միաւորի բոլոր ազգերին մէկ միասնական ընտանիքի մէջ, Աստծոյ թագաւորութեան մէջ։ Քրիստոսի եկեղեցու գլխաւոր առաքելութիւններից մէկը նա տեսնում է վերջինիս մէջ։ Սխալ կը լինէր կարծել, որ Գրիգոր Լուսաւորիչ-Մեսրոպ Մաշտոց կողմնակից են եղել ազգերի մահացման տեսութեան կամ ջատագովը գլուխալիզմի։ Հարցը այստեղ վերաբերում է մարդ-

23 Նոյն, § 670, 671, էջ 375։

24 ՍԴ. 80:12-13։

25 ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, ՆՀ. աշխ., § 236, էջ 131, Բ. ՏԺ. 1:10։

26 Նոյն, § 297, էջ 167, § 577-581, էջ 321-325։

կութեան իմացական, հոգեւոր կեանքի զարգացման բնական ընդհանրացմանը: Մարդկութիւնը Քրիստոսով եղբայրանալով ու Աստծուն մէկ ընդհանուր Հայր ճանաչելով դառնում է մէկ միասնական ընտանիք, այդ միասնութեան մէջ մարդկային ամէն մի անհատ ու խումբ այս աշխարհում պահպանում է իր աստուածատուր առանձնայատկութիւնները: Մեր կարծիքով, աւելի ճիշտ կը լինէր հայ մեծ երախտաւորների հարցադրման մէջ տեսնել բանական ու բնական էքիւմէնական մտածողութեան սաղմերը:

ԶԱՏԱԳՈՎԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԴԵՐԸ

Ինչպէս արդէն ապացուցել է արդի հայագիտութիւնը Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»ը մեծ հաւանականութեամբ խըմբագրուել է Բ-Ե. դարերում բանաւոր եւ գրաւոր կերպով Մշանառութեան մէջ գտնուող մի շարք նիւթերի հիման վրայ: Վերջիններիս թուլում յատկապէս կարելի է նշել Հայաստանում Աւետարանը քարոզելու մասին եղած պատումները, հին վկայաբանութիւնները, Գրիգոր Լուսաւորչի տեսիլը, «Պարսից պատերազմ» ժողովրդական վէպը, Գորիա եւ Շմոն վկաների գրուածքը, Գրիգոր Լուսաւորչին վերագրուող երկերը, Կորիւնի «Վարք Մաշտոց»ը, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»ը եւ այլ ստեղծագործութիւններ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց»ի վաղագոյն խմբագրութիւններից մէկը, որից կատարուել են յունարէն եւ արաբերէն թարգմանութիւնները, աստիճանաբար մոռացութեան է մատնուել եւ մեզ է հասել Ե. դարի կէսերին կազմուած եւ կանոնական համարուող խմբագրութեան տարբերակը: Աշխատութեան վաղագոյն խըմբագրութիւնները պարունակել են նախորդ դարերում տարածուած այնպիսի նիւթեր, որոնք դուրս են թողնուել կանոնացման ընթացքում: Յամենայն դէպս, որքան էլ օգտագործուած հին աղբիւրներից վերցուած մասերը յետագայում ենթարկուել են վերատեսութեան, այնուամենայնիւ մեզ հասածից էլ կարող ենք պատկերացում կազմել Հայաստանում վաղ քրիստոնէական վարդապետութեան մասին²⁷:

Ագաթանգեղոսից մենք իմանում ենք, որ Հայաստանում քրիստոնէութեան տարածման, արմատաւորման եւ յաղթանակի մէջ ոռչակի դեր է ունեցել նախաքրիստոնէական հաւատալիքների եւ

²⁷ Տեր ՄԿՐՏՉԵԱՆ Գ., Ագաթանգեղոսի աղբիւրներից, Վաղարշապատ, 1896,

քրիստոնէութեան միջեւ ընդհանրութիւններ նկատելու փորձառութիւնը, որը առաւելաբար կապուած է ջատագովութեան հետ: Ինչպէս գիտենք, ջատագովութիւնը քննադատելով հեթանոսական մշակոյթը, միաժամանակ աշխատում է երկիրօսութիւն ստեղծել հեթանոսների ու քրիստոնեաների միջեւ: Արդիւնաւէտ երկիրօսութիւնը ենթադրում է գտնել փոխադարձաբար ընդունելի ընդհանրութիւնը ներկայացնում էին որպէս հեթանոսութեան երկարամեայ երազանքը: Վաղ Մջանի որոշ ջատագովները այնքան էին ընդգծում այդ ընդհանրութիւնը, որ անտեսում էին քրիստոնէութեան մի շարք առանձնայատկութիւնները ու շեղում դէպի աղանդաւորականութիւն:

Գրիգոր Լուսաւորիչ հեթանոսների ներկայութեամբ Աստծուն դիմելով ասում է. «Եւ որովհետեւ մարդիկ սովոր էին մեռեալների անշունչ արանեներին երկրպագել, ինքն էլ մեռեալ արանդարաւ խաչի վրայ: Մեռաւ ու անշնչացաւ, որպէսզի սովորական դարձածի միջոցով արագօրէն հենազանդեցնի իր պատկերին իբրեւ կարթ ցոյց տալով խաչը եւ իր մարմինը դարձնելով աշխարհի կերակուր դրա միջոցով նրանց որսալու իր աստուածութեան մշտնջենաւոր արքայութեան արքունական սեղանի համար: Քանդակուած փայտերի փոխարէն նա իր խաչը կանգնեցրեց ամբողջ աշխարհի մէջ, որպէսզի փայտի երկրպագելուն վարժուածները սովորական դարձածի միջոցով համաձայնուէին երկրպագել փայտ խաչին եւ նրա վրայ եղած մարդադէմ պատկերին: Քանզի մարդիկ սիրեցին սնուտի աստուածների պատկերների անխօս կուռքները, այդ պատճառով էլ Աստծոյ Որդին իր

3-53. ՄԱՌ Ն., Հանգամանալից գեկոյց Սինայում կատարուած աշխատանքների, Հաղորդում Կայսերական Ռւզդագառ Պաղեստինեան Ընկերակցութեան», Հտ. ԺԴ., մաս Բ., 1903, էջ 22-25 (ռուսերէն): ԱՆԴՐԻԿԵՍՆ Հ. Ն., Արեւելեան վկայք, Բազմավէպ, 1905 էջ 251-255, 358-360: ՄԱՌ ՆիկոլաՅով, Հայոց վրացիների, արխագների եւ ալանների մկրտութիւնը Սուրբ Գրիգորի յերի, վրացիների, արխագների եւ ալանների մկրտութիւնը Սուրբ Գրիգորի կողմից, Մանկապետերբուրգ, 1905 (ռուսերէն): ԱԿԻՆԵՍՆ Հ. Ն., Նիւթեր հայ վկայարանութեան պատմութեան համար, Վիեննա, 1914: ԶԱՄԻՆԵՍՆ Ա., վկայարանութեան պատմութիւն, մաս Ա., Նոր Նախջեւան, 1914, էջ 67-71: Հայ գրականութեան պատմութիւն, մաս Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատնեադարանին ՍԱՐԳՍԵՍՆ Հ. Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատնեադարանին ՄԻՒԹ-ԱՐԵՍՆ Հ. Բ., Վայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատնեադարանին ՄԱՐԴԱՐԵՍՆ Հ. Յ., Քանդակութեան պատմութիւն, 1924 էջ 23-24, 52-53, 224: ԹՌ-ՄԻՒԹ-ԱՐԵՍՆ Հ. Յ., Քանդակութեան պատմութիւն, 1932, էջ 261-264: ԱԲԵՂԵՍՆ Մ., Հայոց հին գրականութեան պատմութիւն,

մարմնով մարդու կերպարանք առաւ՝ մարդկային պատկերի նմանութեամբ եւ ելնելով բարձրադիր խաչի վրայ, որպէս բարձր դիտակետի, ցոյց տուեց մարդկային արարածներին՝ անբարրառ մեռելութիւնը, ուստի տեսնելով նրան տիեզերքի բարձունքի վրայ՝ ցնծացին, երկրպագեցին ու հնազանդունցին: Եւ քանի որ մարդիկ սովոր էին անխօս կուտքերի մեհեաններում ուրախանալ՝ զոհեր մատուցելով, դրա համար էլ Քո Որդու գոհարերման ժամանակ Դու կոչեցիր տիեզերքը ասելով. «Խմ պարարտ կենդանին մորքուած է, եւ իմ նաշը պատրաստ է» ու բազմացրիր ուրախութիւնը Քո խաչուած Որդու համար եւ յագեցրիր ամբողջ տիեզերքը կենարար մարմնով, որը բաւական կերակուր ու կենդանութիւն է Քո բոլոր երկրպագուներին ամբողջ տիեզերքում: Խսկ նրանք, որ չկարողացան հոգեւոր սեղանի հարսանիքի հրաւերքին գալ, նրանց պատրաստեցիր յաւիտենական տանջանիներին, անանց դատաստանի անվերջանալի չարաշար մահուանը եւ նրանց քաղաքները շինեցիր, պատրաստեցիր գալիք բարկութեան կրակների մեջ: Եւ քանի որ մարդիկ ուսում եւ խմում էին դիցապաշտութեան զոհարերուող անասունների արիւնը, դրա համար նա իր արիւնը բափեց փայտի վրայ, քանզի փայտ դնելով քանդակուած փայտերի փոխարէն, խսկ իր Անձը, մարդադէմ պիհծ արձանների դիմաց եւ իր արիւնը՝ արիւնների ուրախ նուազների փոխարէն, դրանով խսկ նորոգում է նա մարդկային գալարութիւնը: Եկալ նա իր արեամբ փրկեց մեզ ստրկութիւնից եւ իր աստուածութեամբ ազատեց չար մեղքերի ծառայութիւնից: Քանզի մենք ենք Քո Որդու արեան գինը, նրա արեամբ ու մարմնով փրկուածներս ու պատուածներս»²⁸.

Հեթանոս մտածողների հայեացքներում դրական հարցադրումներ է մատնացոյց անում նաև Եզնիկ Կողբացին։ Յոյն իմաստամբուներին քրիստոնէութեան դիլքերից գնահատելով նա գրում է. «Արդ ինչպիս առաջ էլ ասացինք, երբ փիլիսփանները մտքում տեղ գտած օրէնքներով Աստծուն են փնտոում, գովեստի են արժանի, բայց դեպի բազմաստուածութիւն հակուելը եւ աշխարհը Աստծուն մշտական գոյակից համարելը սաստիկ անօրէնութիւն է»²⁹. Պիւթագորասի մասին խօսելով նա մասնաւորեցնում է իր միտքը եւ պնդում, որ վերջինս ճիշտ է, երբ ամէն ինչի սկզբնապատճառ է ընդունում մէկ միութիւնը։ Գովասանքի արժանի կը լինէր, եթէ նախախնամութիւնը այդ սկզբով պայմանաւորէր։ Նա պարաւանքի արժանի է, քանի որ սկզբնապատճառը եւ նախախնամութիւնը տարբեր ակունքներից է բխեցնում, պնդում է Եզնիկ³⁰։ Մի այլ առիթով Եզնիկ ընդգծում է, որ ինքը սիրում է Պղաստոնի աստուած փնտոելու պատրաստակամութիւնը, բայց չի կարող գովել նրա ամբարտաւանութիւնը³¹:

Է. դարի ականաւոր գիտնական Անանիա Շիրակացին շեշտելով, որ տուեալ մօտեցումը ինքը սովորել է Պողոսից, շարունակում եւ խորացնում է նշուած աւանդութիւնը։ «Նախկին ժամանակներում իմաստուն մարդիկ, որոնք մանուկ հասակից իրենց կեանքը նուիրել են երկնային երեւոյթների ուսումնասիրութեանը եւ խորացել են իմաստաշիրական գիտութեան էութեան մէջ, հասկացել են ամէն ինչ եւ մտքով վեր խոյացել երկնանիմ բարձրութեամբ, նրանք պակներ, կալուածներ եւ շնորհակալութիւններ են ստացել մեծամեծ թագաւորներից։ Իսկ եկեղեցու ուսուցիչները, որոնք իրենց կեանքը նուիրել են ուսումնասիրութեան՝ անցնելով ամէն կարգի նգնութիւնների սահմանից, պահել են աստուածային հաւատքը եւ խորամուխ եղել գիտութեան մէջ։ Եւ Քանի որ Սուրբ Գրքի մէջ արձանագրուած օրէնքները հակառակ են բնական գիտութեան, նրանց մէջ գոյութիւն ունի միասնութիւն, ուստի առաջին իմաստակները մեզ համար դաստիարակութիւն»³²:

28 Ա.ԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Նշ. աշխ., § 81-85, էջ 55-59; ԽՐԼՈՊԵՍՆ Գ., Հայ Ընկերացին իմաստասիրութեան Պատմութիւն, Երեւանի Պետական Համալսարանի բային 1978, էջ 48-58:

29 ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Նշ. աշխ., էջ 171:

30 Նոյն, էջ 181:

31 Նոյն, էջ 197:

բակ են հանդիսանում: Նրանց ասածները քննութեան առնելով, տեսնում ենք նրանց նշմարտութիւնը: Եւ մեր նախկին հոգեւոր հայրերը վերցրին նրանց նշմարտացի խօսքերը, որպէսզի իրենց երկու կողմերով՝ արմատով ու ծայրի պտուղներով, պահելով մեզ աստուածային հաւատի մէջ, լցուելով ծայրի պտուղներով եւ հաստատուն մնալով արմատին, միշտ կանաչ եւ պտղաբեր պահենք գիտութիւնը»³²: Նա գտնում է, որ ճշմարտութեան ծառը կարող է աճել քրիստոնեայ եւ ոչ-քրիստոնեայ մտածողների ժառանգութեան հիման վրայ: Այդ երկուսի միասնութիւնը, սակայն, պէտք է կերտել հաւատքի հիման վրայ, հաւատքով ղեկավարուելով: Խսկ «Արարածոց մեկնութիւն» աշխատասիրութեան հեղինակը համոզուած է, որ Սոկրատ, Պղատոն, Քսենոփոն, Ամոնիոս Սակկաս «կարողին եղեն ի սէր միոյ կենդանւոյն Աստուծոյ» եւ «պարկեշտ վարս ստացեալք հաւատովք, իմաստաէր կամալք եւ բանիւ մերձ եկին առնա (Աստուած) հեռացեալ ի կողոցն»³³:

Աղաթանգեղոս գտնում է, որ հին յունական իմաստասիրութեան ու գրականութեան իմացութիւնը մի կողմից նպաստել Տրդատ Գ.ի հակաքրիստոնէական դիրքորոշման, ու մի կողմից օգնել է, որ նա խորապէս իւրացնի քրիստոնէական վարդապետութիւնն ու աստուածաբանութիւնը: «Եւ աստուածասէր թագաւոր Տրդատը, բարեպահտութեամբ ծառայելով քրիստոնեայ հետեւորդի հաւատքով, դարձաւ երկիւղած եւ տեղեկանանալով ու վարժուելով աստուածային հրամաններին, օրինապահ ընդունուածների հետ սիրելի դարձաւ եւ բարի օրինակ՝ ամրող երկրի համար: Եւ հենց այնտեղ փութաջանութեամբ ուշադրութիւն էր դարձնում աստուածային գրքերի ընթերցուածներին, մանաւանդնախապէս տեղեակ էր յունական աշխարհիկ դպրութեանը, առաւել եւս հմուտ լինելով փիլիսոփայական մտքի հանճարագիտութեան մէջ՝ առվորած լինելով այն: Արդ՝ ընդունելով նաև երկնային պարզեների շնորհները, որով եւ շուտով լուսաւորուեց ու թափանցեց աստուածատուր հրամանների հանգամանների մէջ

32 ԱՆԱՆԻԱ ՇԽԱԿԱՑԻ, Մատեաքրութիւն, Թարգմ. Առաջարան, Ծանօթ. Ա. Գ. Աբրահամեանի եւ Գ. Բ. Պետրոսեանի, Տիեզերագիտութիւն, Գլու. 5, Երկնաշուրջառութեան մէջ՝ առվորած լինելով այն: Արդ՝ ընդունելով նաև երկնային պարզեների շնորհները, որով եւ շուտով լուսաւորուեց 1979, էջ 89-90:

33 ԽՐԼՈՊԵԱՆ Գ., Անամիա Շիրակացու Աշխարհայեացք, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակութիւն 1964, էջ 98:

եւ ամէն պատրաստութեամբ իրեն զարդարելով, ըստ աւետարանական կանոնների՝ դարձաւ մարդասէր Աստծոյ ծառայութեանը»³⁴: Ինչպէս աղբիւրները մեզ յայտնում են մանուկ Տրդատ դաստիարակուել է Լիկիանէս անունով ականաւոր մի կոմսի տանը ու ձեռք բերել հարուստ գիտելիքներ, ըստ որում եւ իմաստասիրութեան ասպարէզում:

Ինչպէս արդէն նշեցինք Բ. դարից՝ սկսած ջատագովական այս աւանդութիւնը, որը լայն տարածում է գտել Հայաստանում, իր ակունքներն ունի Պօղոսի հայեացքներում:

Պօղոս Աթէնքի հրապարակներում էպիկուրեան եւ ստոյիկեան փիլիսոփաներին քարոզում էր քրիստոնէական վարդապետութիւնը: Փիլիսոփաները Պօղոսին բոնում ու տանում են այն վայրը, որտեղ իրենք քննարկում են իմաստասիրական հարցեր ու վիճում իրար հետ եւ նրան ասում: «Կարո՞ղ ենք իմանալ, թէ ինչ է այդ նոր վարդապետութիւնը, որ դու քարոզում ես»: Պօղոս նախ շեշտում է քրիստոնեաների ու հեթանոսների միջեւ եղած ընդհանրութիւնը. «Արենացիներ, տեսնում եմ, որ դուք ըստ ամենայնի շերմնուանդ հաւատասէր եք, քանի որ շրջելով եւ տեսնելով ձեր պաշտամեները՝ գտայ նաեւ մի բագին, որի վրայ գրուած էր «Անծանօթ Աստծուն» ում դուք առանց նանաչելու եք պաշտում, ես նոյնին եմ քարոզում ձեզ»: Այդպիսի անունով բագինների եւ պաշտամունքային վայրերի գոյութիւնը հաստատում է Գ. դարի հեղինակ Ֆիլոստրատ կրտսերը Ա. դարի հեղինակ Ապոլոնիոս Թիանացու կենսագրութեան մէջ, Ա.Բ. դարերի յոյն ճանապարհորդ եւ աշխարհագէտ Փոսոնիասը իր «Յունաստանի նկարագրութիւնը» գրքում: Պերգամոնում գտնուող Դեմետրի տաճարում էլ յայտնաբերուել է այդպիսի մակագրութեամբ պաշտամունքային անկիւն:

Պօղոս չի ընդգծում, որ նրանք հեթանոսներ են, չաստուածների են պաշտում: Ալլ շեշտում է, որ նրանք շատ կրօնասէր են: Իրօք, յոյները ամէն իրի եւ երեւոյթի համար չաստուածներ ունեին: Յոյները չէին ցանկանում որեւէ բան դուրս թողնել եւ ստեղծել էին «անծանօթ աստծոյ» պաշտամունքը: Այդ «աստծուն» կարող էր պաշտել որեւէ օտարական եւ մտածել, որ պաշտում է իր «աստծուն»: Այսպիսով, Պօղոս սկսում է խօսել անծանօթ Աստծոյ, իր Աստծոյ մասին, այն Աստծոյ մասին, որ ինքն է պաշտում, իրաւ ու

³⁴ Ա.Գ.Ա.Թ.Ա.ՆԳԵՂՈՍ, Նշ. աշխ., § 863-864, էջ 481:

կենդանի Աստծոյ մասին: Իր Աստուածը արդէն անծանօթ չէ, այլ ծանօթ է ու իրեն յայտնել է ողջ մարդկութեան: Այդ Աստուածը Արարիշ է: Նա մէկ սկզբից արարել է մարդուն, ազգերին ու սահմանել նրանց կենսագործունէութեան տարածքները: Նա կարիք չունի որեւէ բանի: Ինքն է տալիս մարդուն այն, ինչով մարդ ապրում ու գործում է: Ինքն է պահում մարդուն: Նրա մէջ է ապրում մարդ եւ Նա էլ ապրում է մարդու մէջ: Նա հեռու չէ մարդուց եւ կանչում է մարդուն ապաշխարութեան, որպէսի յարութիւն առնի մեռելներից ու յաւիտենական կեանք ունենայ՝³⁵: Ինչպէս դժուար չէ նկատել Ագաթանգեղոս-Լուսաւորիչ հարցադրումների մեծ մասը բխում են Պօղոսի արտայայտած այս մտքերից:

Ուշագրաւ է Պօղոսի արտայայտած հետեւեալ միտքը: «ՄԵկ արիւնից ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը, որ բնակուեն ամբողջ երկրի երեսին, հաստատեց նախակարգեալ ժամանակները եւ դրեց նրանց բնակութեան սահմանները, որ փնտուեն Աստծուն, որպէսզի թերեւս խարխափեն դէպի նա, գտնեն նրան. թեւ նա մեզնից իւրաքանչիւրիցս հեռու էլ չէ, քանի որ նրանով ապրում ենք և շարժում ենք եւ կանք, ինչպէս ձեր բանաստեղծներից ոմանք ասացին, թէ՝ իսկը նրա գարմն ենք»³⁶:

Այսպիսով, ապացուցելու համար, որ միաստուածութեան գաղափարի հիմքերը հարազատ են իր լսարանի անդամների իմաստասիրական համակարգի համար զուգահեռներ է անցկացնում հրէական միաստուածութեան եւ ստոյիկեան միաստուածութեան գաղափարների միջեւ եւ դրանից յետոյ մատնանշում քրիստոնէական միաստուածութեան արմատական տարբերութիւնները: «Ձեր բանաստեղծներից ոմանք» ասելով Պօղոս նկատի ունի Ք. Ա. երրորդ դարում ապրած Արասթոսին եւ կլեանթոսին, որոնք Զեւսի ձօնուած իրենց օրհներգերում արտայայտել են այն գաղափարը, որ մարդը աստուծոյ զարմն է: Յոյն իմաստաէլները մասնաւոր առարկութիւն չարեցին բազմաստուածութեան դէմ եւ միաստուածութեան ի նպաստ Պօղոսի փաստարկների նկատմամբ: «Երբ լսեցին մեռելների յարութեան մասին, ոմանք ծաղրի էին ենթարկում. ոմանք կ ասում էին. «Մի ուրիշ անգամ կը լսենք քեզնից այդ մասին»³⁷:

³⁵ Գրծ. 17:22-31:

³⁶ Գրծ. 17:16-28 ընդգծումը իմն է Գ. Խ.

³⁷ Գրծ. 17:32-33:

**ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ՓԱՍՏԱՐԿՆԵՐ**

Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» աշխատութեան Գ. բաժինը (259-715 պարբերութիւնները, էջ 145-399) կրում է «Սուրբ Գրիգորի Վարդապետութիւնը» խորագիրը: Այն քրիստոնէական վարդապետութեան ինքնատիպ շարագրութիւն է, որը նման է ու տարբերում է Աստուածաշունչի սովորական մեկնութիւնից, կրօնական սովորական դասագրքից (Catechism) որը նշանակում է (լսելի դարձնել): Այն օգտագործուել է ԺԶ. դարից: Մինչեւ այդ համանման երկերն էլ յետադարձ կերպով անուանուել են նոյն կերպ: Գրաւոր այդպիսի ուսուցման դարեր առաջ նախորդել է բանաւորը:

Այդպիսի վարդապետական բանաւոր ու գրաւոր ուսուցման նպատակն էր քրիստոնէութիւնը ընդունած անհատին նախապատրաստել մկրտութեան ու հաղորդումի: Ագաթանգեղոսը օգտուել է մինչեւ իր ժամանակը շրջանառութեան մէջ եղող կրօնական համանման գործերից (Հիպատիուսու (170-236), Որոգինէս (185-254), Կիւրեղ Երուաղէմացի (315-387), Ամբրոսիոս (339-397), Ուկեբերան (347-407), Թէոդորոս Մոպուեսացի (350-428)): Նա սակայն, չի պահել քննարկուող ու մեկնաբանուող հարցերի աւանդական կառոյցն ու ոճը: Ագաթանգեղոսը չի վերլուծել Տէրունական աղօթքը, Քրիստոս Յիսուսի մանրամասն կենացգործութիւնը: Առաւելաբար կեղրոնացել է այն հարցերի վրայ, որոնք լրյա են սփոռում Աստծոյ մարդու հետ անընդհատ հաղորդակցման մէջ գտուելու իրողութեան, ապաշխարութեան, փրկութեան վրայ: Նա ընթերցողի ուշադրութիւնը սեւեռում է, թէ ինչպէս Աստուած յայտնուում է մարդուն, թէ ինչպէս Նա խօսում ու պատգամում է մարդուն, ինչպէս Նա աստիճանաբար մարդուն ծանօթացնում է աստուածային ճշմարտութիւնների հետ, Աստծոյ կամքին: Հեղինակը առանձնացնում է քրիստոնէական վարդապետութեան, իր կարծիքով, առաւել էական ու խորքային հիմնաղորյութեանը եւ ընթերցողի ուշադրութիւնը սեւեռում դրանց վրայ: Դրանք այն զբոյթներն են, ըստ Ագաթանգեղոսի, որոնցով քրիստոնէութիւնը տարբերում է Հայաստանում գործող միւս սի, որոնցով քրիստոնէութիւնը տարբերում է Հայաստանում գործող միւս սի, կրօնների վարդապետութիւնից, որոնցով ընթերցողին պիտի համոզի կրօնների վարդապետութիւնից, որոնց աղօթքութեան տակ հայերը գերանաեւ այն փաստարկներն են, որոնց աղօթքութեան տակ հայերը գերանաեցին Յիսուսի վարդապետութիւնը եւ ընդունեցին այն: Նկատի դասեցին Յիսուսի վարդապետութիւնը եւ ընդունեցին այն: Նկատի պէտք է ունենալ, որ այդ օրերին քրիստոնէութիւնն ու աւանդական

Հայկական հեթանոսութիւնը համարում էին երկու մրցակից կրօններ: Եթէ ճշտութեան, արդարուածութեան ու հիմնաւորուածութեան առումով անվիճելի էր քրիստոնէութեան գերազանցութիւնը, իսկ կազմակերպչական, աւանդութեան, ժողովրդի կենցաղի հետ շաղկապուածութեան առումով նկատելի էր հեթանոսութեան դիրքերի ներգործութիւնը: Ինչպէս նշում են որոշ հեղինակներ, այդ ճանապարհով որոշ տեղերում հեթանոսութիւնը առելի կայուն էր նկատւում³⁸:

«Գրիգոր Լուսաւորչի Վարդապետութիւնը» գրութեան հեղինակը անտեսում է երկու կրօնների վարդապետութիւնների այն տարբերութիւնները, որոնք սովորաբար վիճաբանութեան առարկայ էին դառնում այդ օրերին: Նա իր շարադրանքը կառուցում է քրիստոնէութեան անվիճելի առանձնայատկութեան, գերազասութեան հէնքի վրայ՝ մարդ-գերագոյն էակ յարաբերութեան վրայ:

Քրիստոնէութեան Աստուածը, պնդում է հեղինակը, արարելով մարդուն երբեք չի բաժանուում նրանից: Նա ոչ միայն Արարիչ է, այլ նաև հոգատար Հայր: Մարդը Աստծոյ արարչութեան գլուխ գործոցն է, պատկը: Նա իր ձեռքով է նրան պատրաստել ու իր շունչը մարդու մէջ: Նա մարդուն իր պատկերով է ստեղծել ու նրան տուել բանականութիւն, իմանալու, ճանաչելու, կանխատեսելու կարողութիւն, ազատ կամք, սեփական հայեցողութեամբ ընտրելու իրաւունք, բնութիւնը վայելելու եւ տնօրինելու իրաւունք, Աստծոյ հետ ազատ հաղորդակցելու եւ կապ պահպանելու իրաւունք³⁹: Աստուած «մարդուն սիանելագործ կարգով իշխան դարձեց»⁴⁰: Աստուած երբեք չի հրաժարուել մարդուց, երբեք նրան չի թողել՝ անկախ մարդու լաւ ու վատ գործերից, հնազանդութիւնից ու անհնազանդութիւնից, մեղաւորութիւնից ու անմեղութիւնից: Աստուած մարդուն յայտնուել ու նրա հետ խօսել է ինչպէս բնութեան իրերով ու երեւոյթներով, այնպէս էլ հրաշքներով, մարդկային կերպարանքով: Աստուած անբաժան է մարդուց, քանի որ նրա մէջ է իր շունչը եւ մարդը Աստծոյ կերպարով է ստեղծուած: Մարդուն յայտնուելով Աստուած ցանկանում է նրան իրեն վարժեցնել, իրեն կա-

³⁸ ՏԵ՛ս, ԽՐԱՊԵՏԱՆ Գ., Հայ ԸՆԿԵՐԱՅԻՆ Իմաստափրութեան Պատմութիւն, էջ 24-27:

³⁹ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Նշ. աշխ., § 264, էջ 149:

⁴⁰ Նոյն, § 263, 273, էջ 147, 155:

պել, նրան յուշել ճիշտն ու արդարը, ցոյց տալ կեանքի ճիշտ ուղին ու փրկել վտանգից: Որոշ մարդիկ հասկացել ու ընդունել են նրան, ուրիշները ոչ: Աստուած մեծ համբերութեամբ շարունակել է ու շարունակում է յայտնուել մարդուն: Նա բոլոր մարդկանց ցանկանում է տալ հաւասար հնարաւորութիւն աստուածային ծրագիրը ընդունելու գործում: Այսպիսով Աստուած ապացուցում է, որ ինքը մասնաւոր սէր ունի դէպի մարդը, որ ինքը մեծապէս հետաքրքրուած է մարդով, որ ինքը յատուկ տեղ է յատկացնում մարդուն իր ծրագրում: Հեթանոսական չաստուածները լինելով մարդակերտ կամ բնութեան որեւէ իր կամ երեւոյթ անկարող են մարդուն խոստանալ ու տալ այդ բոլորը:

Աստուած, այսպիսով, չի կարող անտարբեր լինել իր արարածի նկատմամբ, նրա կեանքի ընթացքի, ճիշտ ու սիսալ ապրելակերպի ու մտածելակերպի նկատմամբ: Նա ոչ միայն Արարիչ է այլ նաև Փրկիչ, մի յատկութիւն, որից զուրկ են բոլոր չաստուածները: Նա ամէն ինչ ի գործ է դնում, որպէսզի իր պատկերով ստեղծուած եւ իր շունչը կրող մարդը երջանիկ լինի, չարիքից ու սատանայից հեռու լինի ու չկորցնի յաւիտենական կեանքով դրախտում ապրելու իր աստուածատուր իրաւունքը: Այս մտահոգութեամբ է, որ Աստուած մարդուն մենակ չի թողնում, նրանից չի հեռանում: Ողջ պատմութեան ընթացքում նա մարդուն խրատել եւ արդարութեան ու երջանկութեան ճանապարհը ցոյց է տուել՝ երեմն դիմելով նաև պատիժների⁴¹:

Բայց երբ մարդկութիւնը շարունակել է ընթանալ սիսալ ճանապարհով դէպի անդունդ, Աստուած իր միածին Որդուն ուղարկեց աշխարհ մարդու կերպարանքով: Մարդացաւ Աստուած որպէս զի մարդ դուրս գայ իր անմիտար վիճակից ու ապրի երջանիկ յաւիտենական կեանքով: Երբ չաստուածները պահանջում ու սպասում են, որ մարդիկ իրենց համար զոհուեն, քրիստոնէական Աստուածը մարդանալով գալիս է աշխարհ ու զոհուում մարդու համար, մարդու փրկութեան ու երջանկութեան համար⁴²:

Քրիստոս Յիսուսի աշխարհ գալը, աշխարհում նրա առաքելութիւնը, մարդու փրկութեան համար նրա կատարելիք զոհաբերութիւնը,

41 Նոյն, § 318-337, 372-407, 472-481, 499-507, 549-551, էջ 179-189, 207-227,
261-267, 277-341, 363-371:

նը ոչ պատահականութիւն էին եւ ոչ էլ քմահաճոյք: Դրանք ունէին իրենց հիմքերը ժամանակի ու տարածութեան մէջ: Դրանք կանխատեսուել էին հարիւրաւոր տարիներ առաջ: Աստուած այդ մասին հաղորդել էր իր մարգարէների ու նոյնիսկ հեթանոս թագաւորների միջոցով: Մարդկութեան մեծ մասը անտեսեց այդ նախազգուշացումը եւ չընդունեց Քրիստոսին: Քրիստոսի աշակերտները լցուած Սուրբ Հոգիով աւետարանեցին աշխարհով մէկ: Աւետարանչութեան ալիքը հասաւ նաեւ հայոց աշխարհ: Հայերն ունեցան իրենց աւետարանիչները, որոնց միջոցով քրիստոնէացաւ հայոց աշխարհը⁴²:

Եզնիկ Կողբացին այլ դիրքերից է մօտենում հարցին: «Եղծ Աղանդոց» աշխատասիրութեան Ա. գրքի առաջին մասը նուիրում է Աստծոյ եւ չաստուածների էական տարբերութիւնների բացայացման: Այնտեղ նա ցոյց է տալիս թէ ինչու եւ ինչպէս չաստուածները չեն կարող նկատուել ու պաշտուել որպէս գերագոյն էակ, քանի որ նրանք զուրկ են աստուածութեան յատկութիւններից:

Կրօնի հիմքը, պաշտամունքի առարկան, Գերագոյն էակը «պէտք է որ մշտնջենական ու անսկիզր լինի, որը ոչ ոքից գոյութեան սկիզր չի առել, իրենից վեր էլ ոչ ոք չկայ, որ հարկ լինի նրան պատճառ կարծել կամ մտածել, թէ նրանից է գոյանալու սկիզր է առել: Որովհետեւ ոչ ոք չկայ նրանից առաջ եւ ոչ ոք նրանից յետոյ՝ նման նրան, չկայ եւ նրան հաւասար ընկեր, ոչ էլ կայ նրան հակառակ էուրիւն, չկայ նրա կարիքների համար նիւթ մատակարարող գոյացութիւն, եւ ոչ որեւէ նիւթ, որից ստեղծէր՝ ինչ որ ստեղծելու էր. այլ ինքն է պատճառը բոլորի, որ ստեղծուեցին՝ անգոյութիւնից գոյութեան բերուելով: Նա ունակ է ինչպէս կենդանութիւնը տալու, նոյնպէս եւ իր անստեղծ էութեան գիտութեամբ իր արարածներից իւրաքանչիւրին ըստ իր էութեան կատարելութեան բերելու: Նա ոչ միայն նրանով է զարմանալի, որ անգոյութիւնից գոյութեան բերեց անգոներին ու ոչնչութիւնից ինչի վերածեց ոչինչներին, այլեւ նրանով, որ անեղծ ու հաստատ է պահում ստեղծուածներին, որոնց եւ հենց սկզբում անհամանարար տուեց կենդանութիւնը՝ իր բարերարութիւնը ցոյց տալու համար: Որովհետեւ նա որեւէ բանի կարօտ մէկը չէր, որ

⁴² Նոյն, § 364-371, 459-471, 482-487, 508-537, 565-572, էջ 203-207, 253-261, 267-269, 281-299, 315-331:

⁴³ Նոյն, § 541-545, 562-564, 307-596-601, 638-640, 685-693, էջ 301-303, 313-315, 333-337, 357-359, 383-391:

այն պատճառով միայն իրեն պահեր կենդանութիւնը, քոյլ ու անգօր չէր, որ միայն իր համար բացցներ զօրութիւնը. ոչ էլ գիտութեան պակաս ուներ, որ միայն իրեն պահեր գիտութիւնը. կարօտ չէր նաև իմաստութեան, որ երբ ուրիշներին բաժաներ իր իմաստութիւնը՝ պակասութեան պատճառ առաջ գար: Այլ կենդանի է նա եւ կենդանութեան աղքիր՝ բոլորին կենդանութիւն է տալիս, ինքն էլ մնում է լրի ու անսպաս կենդանութեան մէջ. ուժեղացնում է բոյերին հզօր ոյժով, իսկ ինքը չի բուշանում ուժեղացնող ոյժից. պարզեւում է գիտութիւն բոլոր անգետներին եւ ինքն իր մէջ պարունակում է իր մէջ ամենագիտ գիտութիւնը. բոլորի մէջ ըխեցնում է անհատնում իմաստութիւնը եւ ինքը մնում է անխախտելի՝ ամենահնար իմաստութեան մէջ»⁴⁴: Գրքի զգալի մասը նույն բուած է ապացուցելու համար, որ հեթանոսական պաշտամունքի առարկաները գուրկ են այդ գծերից:

Իսկ ո՞վ է ստեղծել չարիքը, որտեղից է այն գալիս: Միմէ՞կ այն էլ Աստծոյ կողմից է ստեղծուած: Նա նախ ընդգծում է հարցի բարդութիւնը. «Խսկապէս, չարիքները, որ լինում են, տարակուսանելի մեջ են գցում շատերին: Եւ բազմաթիւ երեւելի մարդիկ դրա համար շատ որոնումներ կատարեցին: Ումանք կամեցան Աստծոյ եւս գոյակից անսկիզի մի բան ենթադրել, իսկ ումանք երանից զատ ինչ-որ նիւթ, որը հիվէ են անուանում, գտնելով որ Աստուած նրանից ստեղծեց արարածները: Ուրիշներ ել բոլորովին հրաժարուեցին բնելերոց, որպէս թէ այդ հարցը ամենեւին սպառում չունի»⁴⁵: Ինքը հաստատ համոզուած է, որ չարը աստուածային ծագում չունի: Չարիքն առաջանում է, երբ մարդ աստուածատուր կամքի եւ ընտրելու իրաւունքը իր սեփական կամքով միասլ է օգտագործում: Այդպիսի չարիքներից է հեթանոսութիւնը, երբ մարդիկ իրական Աստուածը պաշտելու փոխարէն երկրպագում են կուռքերին:

Եզնիկ Կողբացին արդարացի է, երբ գտնում է, որ աստուածապաշտութիւնը մարդու ներքին պահանջն է, որ ամէն մի մարդ այս կամ այն ձեւով ու չափով աստուածապալու է։ Անհնարին է չպաշտել Տարբերութիւնը պաշտամունքի առարկայ ու բովանդակութեան մէջ է։ «Եթէ մէկը նշմարիս Աստծուն է պաշտում, ազնիւ գործ է կատարում, իսկ եթէ նշմարիսը թողած ժարեր ու փայտեր է պաշտում՝ որպէս Աստուած, շատ մեծ չարիք է գործում, որովհետեւ

44 ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Նշ. աշխ. էջ 7-9:

45 *lunus*, 59 19:

իսկականն ու անհրաժեշտը անպատեհ բաներով է փոխարինում: Եթէ մէկը արձան է պատրաստում, բայց ոչ թէ մահով աչքից հեռացած սիրելիի համար կամ իր նարտարութիւնը ցոյց տալու նպատակով, այլ պաշտում ու երկրպագում է՝ իրրեւ Աստծոյ, չար գործ է կատարում»⁴⁶: *Բնութեան իրերի պաշտամունքը, նկատում է եզնիկ, հեթանոսները արդարացնում են պնդելով, որ նրանք շարժւում են: Նրանց համար ամէն մի շարժուն բան կենդանի է ու պաշտելի:* Քննադատելով նրանց նա ասում է. «Եթէ ամէն շարժուն բան կենդանի լինի, ապա ջրերն էլ, որ հոսում են, կենդանի պիտի համարեն, կրակը եւս, շարժուելու պատճառով, կենդանի պիտի կարծուի, օդն ու քամիները, փշելու պատճառով, կենդանի պիտի հաշուրեն. այլեւ կենդանի պիտի համարուեն տուներն ու խոտարյուսերը, որոնք թէեւ դանդաղընթաց են, սակայն իրենց անմամբ շարժուն են երեւում: Այսպիսով, ինչպէս որ ամէն շարժուող մտային ու հոգեկան կենդանութիւն չունի, նոյնպէս էլ ոչ արեգակը, ոչ լուսինը, ոչ աստղերը եւ ոչ իսկ երկինքը, որտեղով նրանք շրջում են, մտային ու հոգեկան կենդանութիւն չունեն»⁴⁷:

Այսպիսով, Հայաստանում քրիստոնէութեան օրինականացումը, որը իր հիմքում ունէր չուրջ 250 տարուայ աւետարանչական լուրջ նուածման պատմութիւն եւ հայ մտքի երկարամեայ բնական վերելքի պատուանդան չէր կարող լինել բարի ու գեղեցիկ պատահականութեան արդասիք: Այն հիմնուած է եղել ոչ միայն քաղաքական ու մշակութավերտական նկատառումների, այլ նաև լայն նոր գաղափարների աստիճանական ու հիմնաւոր իւրացման, զանգուածների գաղափարական համոզուածութեան ու հայ մտաւորականութեան աստուածաբանական ու իմաստափրական անվիճելի փաստարկումների վրայ: Այս պատճառով էլ այն այսօր մեզ նպաստում է դէպի հեթանոսութիւն վերադարձ կատարելու եւ հայ եկեղեցին, հայ ազգը եւ հայ միտքը թուլացնելու ու աղքատացնելու արդի փորձերի դէմ տարուող պայքարում:

ԴՐԱ. ՓՐՈՒ. ԳԵՂՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

⁴⁶ Նոյն, էջ 33:

⁴⁷ Նոյն, էջ 129

The ideological foundations
of legalization of christianity in Armenia
(Summary)

Dr. Gevork kherlopian

Thomas, Thaddeus, Bartholomew, Andrew, Mathias Simon the Zealot were the first to disseminate the good news in Armenia. They were followed by evangelists of different nationalities: Assyrians, Greeks, Jews, Romans, Iranians, Alans, Caucasian Albanians and Armenians. The Armenian mind gradually, from the middle of the first century to the end of the third, appropriated the new teaching and comparing it with the other religions active in the country (The Armenian, Iranian, Greek pantheons, the Jewish religion) gave his preference to Christianity. The Armenians looked at the issue from three aspects: political, cultural and ideological. The author has made a successful attempt to reveal the theological and philosophical foundations of the conversion. In his research the author has relied on: 1. the Bible, 2. History of Armenia (actually history of the conversion of Armenians) ascribed to Agathangelos (actually a compilation of materials in circulation during the II-V centuries in Armenia that have been finally edited by the middle of the 5th century). 3. The polemical book of "Against Heresies" of Yeznik Koghpatsi (IV-V century) where he has argumentedly criticized the pagan religions of Greece, Iran (Zoroastrianism), Christian sectarianism (the teaching of Marcion in particular) and ancient Greek philosophy. The book of Yeznik is written a few years after the Council of Ephesus, about 15-20 years after the invention of the Armenian Alphabet, and while the second translation of the Bible into Armenian is taking place. It includes materials of Early Christianity. 4. The History of Vartan, written by Yeghishe (V century) where the author describes one of the first international wars for human rights, freedom of worship and defends the major principles of Christianity and evangelism from Zoroastrian criticism. 5. The experience of Early Christianity. The author has focused on four spheres in revealing the foundations of the great conversion: The spread of Christianity as a part of God's Plan (Evangelization of the world is the actualization of God's will and message, God has lead the evangelists through all difficulties to final victory, acceptance of Christianity redeems the nation from the brutalities practiced during the years of prosecution, God has prepared and the evangelists are serving the cup of eternity, cleansing fire that leads to life through temporary death); The time factor (God has sent His Begotten Son at a time what men had become mature enough to understand, had felt the need for, thus ther has been a history of objects and manners of worship, Incarnation is a part of God's plan for man, human history

runs from one nation one language reality into ethnic and linguistic plurality and from there through the Cross into one language and one nation world system on a higher level, human life has seven stages according to seven days of creation: Christ will come on the beginning and the end of the sixth- the Second Coming- to lead humanity into the period of eternity), God has prepared people of the world for the coming of the savior; The role of apologetics (There are common lines between pagan and Christian civilizations, thinking, worship, they have been used to bring the victory of truth, light; salvation and the defeat of evil, Satan, sin, death); Theological and Philosophical foundations (Christianity is man oriented, man has a special place and meaning for Christianity, Christianity sees man in his dignity and power, God creating man by His hands according to His image and blowing His breath into him could never have left man alone even in his worst conditions, this has been expressed through history and in the coming of Christ Jesus, Christ has sacrificed Himself for the salvation of man while all other religions demand that man sacrifice himself for the god worshipped, the Trinity is not only the creator, but also the Lord, loving Father and the Savior of man, the coming of Christ Jesus is not an accident, but a phenomenon that has been foretold, prophesized, Christianity is a divinely based and founded religion and not a human creation. Pagan gods neither have nor can have these features).